ԱՐԱՐԱՏ ԵՂԻՇԵԻ ՉԱՔԱՐՅԱՆ, *տ.գ.դ., պրոֆեսոր*
ՀՊՏՀ մարքեթինգի ամբիոնի վարիչ

ԿԱՐԱՊԵՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՊՏՀ մարքեթինգի ամբիոնի ասիստենտ

ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ցանկացած երկիր ժամանակ առ ժամանակ պարտավոր է վերանայել իր տնտեսական քաղաքականությունը, ոչ միայն ֆինանսատնտեսական ճգնաժամերի և տնտեսական համակարգի փոփոխման պայմանների թելադրանքով կամ, նույնիսկ պարտադրանքով, այլ նաև պայմանավորված նման ֆորսմաժորային իրավիճակների բացակայությամբ: Քննարկվող հիմնախնդրի կարևորությունը կայանում է նրանում, որ ցանկացած երկրի կողմից իրականացվող արտադրական գործընթացներն ու ծառայությունները պետք է նպատակաուղղված լինեն առաջին հերթին սեփական երկրի, այն է՝ ազգային շուկայի կարիքների առավելագույն բավարարմանը: Վերջինս կարող է ապահովվել արդյունաբերության կառուցվածքային համակարգի (ԱԿՀ) և ազգային շուկայի (ԱՇ) պահանջմունքների ու պահանջարկի հավասարակշռման միջոցով: Այնուամենայնիվ, հարկ ենք համարում նաև ընդգծել, որ հավասարակշռումը մենք չենք բացարձակացնում կամ գերագնահատում, քանի որ այն իդեալական հավասարակշռված կարող է լինել միայն ու միայն տեսականորեն, իսկ գործնականում այդ հավասարակշռությունը կարող է մոտենալ հնարավորինս տեսականին: Այստեղ կարևոր է այն, որ հավասարակշռումը բացում է նաև սկզբունքորեն նոր հնարավորություններ բոլոր տեսակի ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և արդյունաբերական արտադրանքի նկատմամբ ներքին շուկայի պահանջարկի բավարարման համար, իսկ լայն իմաստով սա ենթադրում է առաջատար տեխնիկայի, նոր տեխնոլոգիաների ու նյութերի և արտադրության կազմակերպման նոր ձևերի, գիտատեխնիկական առաջընթացի էական արագացում, ինչպես նաև բնական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների նպատակային օգտագործում: Նշված հավասարակշռումը կարող է և պետք է ընդգրկի նաև հիմնարար ու կիրառական գիտական մշակումները, պատենտները, լիցենզիաները, նորամուծությունները, ազգային մշակութային և հոգևոր ժառանգությունը, ինչպես նաև դրանց հետ առնչվող ամբողջական տեղեկատվությունը: Սակայն ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ ինչպես Խորհրդային Միության փլուզման առաջին տարիներին, այնպես էլ այժմ շուկայական տնտեսության պայմաններում դեռևս ՀՀ արդյունաբերության կառուցվածքային վերափոխումները տեղի են ունենում տարերայնորեն, որոնք և հրատապ են դարձնում տնտեսության զարգացման այնպիսի կարգավորիչ մեխանիզմների ստեղծելը, որոնք թույլ կտան կանխել գոյություն ունեցող անհամաչափությունների ու անհամամասնությունների խորացումը: Հետևաբար, հարկ է ընդգծել, որ դա հնարավոր է միայն ակտիվ արդյունաբերական քաղաքականության մշակման և իրականացման միջոցով: Արդյունաբերության կառուցվածքային համակարգի և ազգային շուկայի հավասարակշռումը էապես կարող է նպաստել տնտեսության զարգացման համալիր ծրագրավորմանը և կառավարման գործընթացում դառնալ տնտեսության դիվերսիֆիկացված ու հեռանկարային զարգացման կանխատեսումների հիմնական միջոցը: Ելնելով այս հիմնադրույթից անհրաժեշտ ենք համարում նշել, որ երկրի տնտեսական աճի ապահովման համար կարևորագույն նախադրյալ ու խթանիչ գործոն է հանդիսանում արդյունաբերության կառուցվածքային համակարգի և ազգային շուկայի սիստեմատիկ հավասարակշռվածությունը, որը պահանջում է մի կողմից՝ հավասարակշռման գնահատում տնտեսու-

թյան բոլոր մակարդակներով, մյուս կողմից՝ դրա ներդրման սկզբունքների և մոտեցումների մշակում: Տեղին է նշել, որ հավասարակշռումը ոչ միայն ապահովում է առաջարկի և պահանջարկի տնտեսական փոխհարաբերությունները, այլև բնութագրվում է որպես այդ հարաբերությունների, ինչպես նաև արտադրական ներուժի ու ռեսուրսների օգտագործման շուկայական կառուցվածքի և մրցակցության կարգավորման մեխանիզմ: Վերջինս առաջին հերթին արտահայտում է տնտեսական գործընթացների արժեքային և բնաիրային զարգացման փոփոխության կողմերը, ինչպես նաև տեխնիկական ու տնտեսական զարգացման հիմնական ցուցանիշների մակարդակը, որն էապես կարող է նպաստել դրանց նպատակաուղղված և համաձայնեցված բարձրացմանը, բացահայտել տնտեսական ու շուկայական ցուցանիշների փոփոխության ազդեցությունը հասարակական ամբողջական արդյունքի աճի և նրա կառուցվածքի վրա: Որպես մակրոտնտեսական հարաբերությունների արտահայտման կատեգորիա, հավասարակշռումը միաժամանակ թույլ է տալիս բացահայտել այն էական անհամամասնությունները, որոնք առաջանում են տնտեսական ճգնաժամի պայմաններում, ինչպես նաև ազգային ամբողջական արդյունքի ծավալի, կառուցվածքի և դրա շուկայական պահանջարկի միջև:

Հավասարակշռման այդ երկու բաղադրիչների միջև գոյություն ունի հակադարձ ֆունկցիոնալ կախվածություն, ընդ որում արտադրանքի շուկայական պահանջմունքները որպես կանոն պայմանավորում են արդյունաբերության և ներմուծվող արտադրանքի ծավալն ու դրանց հետագա աճի տեմպերը: Սակայն դա չի նշանակում, որ հավասարակշռման համակարգում առաջնայնությունը բոլոր դեպքերում պետք է տալ արտադրանքի շուկայական պահանջմունքների խնդիրների լուծմանը: Ճիշտ է, արտադրության աճը և կառուցվածքը հիմնականում պայմանավորվում են շուկայական պահանջմունքներով, սակայն արդյունաբերության գիտատեխնիկական նվաճումների արդյունքները ևս հանդիսանում են շուկայական նոր պահանջմունքների առաջացման հիմքը:

Հետևաբար, հաշվեկշռումը տնտեսության զարգացման և շուկայական պահանջմունքների համապատասխանեցման մի մակարդակից մյուսին անցման տնտեսական գործընթաց է, որի հիմնական նախադրյալն ու նախապայմանը ոչ միայն արտադրանքի ծավալն է, այլև գիտատեխնիկական արտադրանքի յուրացումն ու թողարկումը: Այս դեպքում հավասարակշռման մակարդակի գնահատման չափանիշն արտադրանքի շուկայական պահանջարկի բավարարման աստիճանն է, որը կախված է հավասարակշռման համակարգի կազմավորման և մասնավոր բնութագրիչների ֆունկցիոնալ ու համալիր գործունեության առանձնահատկություններից:

Այդ նպատակով մեր կողմից հավասարակշռման բնութագրիչները բաժանվել են երկու խմբի, ըստ շուկայական և արտադրական հատկանիշների:

1. Հավասարակշռման շուկայական բաղադրիչներին վերաբերում են արտադրանքի.
- որակը և տեխնիկական մակարդակը,
- օգտակարությունը (նաև սահմանային) և փոխադարձ փոխարինման հնարավորությունները,
- հիմնական տեխնիկական պարամետրերի համապատասխանությունը միջազգային լավագույն նմուշների մակարդակին,
- կյանքի ցիկլի (կենսացիկլի) տևողությունը՝ ըստ շահագործման ծախսերի, գնի և ստացված արդյունքի համեմատության գնահատման,
- արդիականացման սահմանային ծախսերն ու եկամուտները,
- շահագործման ռեսուրսատարության առավելագույն և նվազագույն ծախսերի չափը,
- մրցունակության դիմակայման գլխավոր տնտեսական պարամետրերի պահպանման հնարավորությունները:

2. Հավասարակշռման արտադրական բնութագրիչներին վերաբերում են.

- արտադրության տեխնիկատեխնոլոգիական առաջադիմության և շահագործման տեխնիկական ճշգրտության աստիճանը,
- նյութական ռեսուրսների և ներդրումների ապահովման կայունությունը,
- արտադրության կազմակերպման նոր և ժամանակակից ձևերի, կոոպերացիաների առանձնահատկությունն ու համատեղ արտադրությունները,
- արտադրության տեխնիկական վերակառուցումն ու վերազինման սահմանային ծախսերը և եկամուտները:

Նշված երկու խումբ բաղադրիչների փոխհամաձայնեցված կառավարման միջոցով կարող ենք միմյանց հետ չափակցել հավասարակշռման անհրաժեշտ համամասնությունները, մշակել դրա մի մակարդակից մյուսին անցնելու նորմերը, որոնք անհրաժեշտ են նաև նախատեսված համամասնությունների հիմնավորման և տնտեսական հետևանքների կայունացման համար:

Այդ նորմերը պետք է լինեն ըստ արդյունաբերական ներուժի հնարավոր կառուցվածքի օգտագործման, նորագույն տեխնոլոգիաների ներդրման, աշխատողների որակավորման բարձրացման և մասնագիտական կառուցվածքի կատարելագործման: Դրա համար անհրաժեշտ են նաև տվյալ հավասարակշռման ռեսուրսաապահովման գիտականորեն հիմնավորված նորմատիվներ, որոնք թույլ կտան տնտեսական շրջապտույտից ազատել ավելորդ արտադրառեսուրսները:

Այդպիսի նորմերի հաստատումը վերաբերում է արտադրության և աշխատանքի տեխնիկական հագեցվածության, սարքավորումների ու արտադրանքի տեխնիկական մակարդակի, սարքավորումների տարբեր միավորների և հոսքային գծերի արտադրողականության ու արտադրության տեխնոլոգիական վերափոխումների գնահատմանը: Հավասարակշռման նորմատիվային բազայի ստեղծման ժամանակ պետք է նկատի ունենալ բացահայտ փոխկապակցությունը՝ սարքավորումների, տեխնիկական մակարդակի և արտադրանքի միջև: Արդյունաբերության կառուցվածքային համակարգի և ազգային շուկայի բաղադրամասերի մակարդակը համալիր և նորմավորված փոփոխելու դեպքում էապես բարձրանում է ներուժի օգտագործման արդյունավետությունը, արտադրության մրցունակությունը, զգալիորեն կրճատվում է արտադրամիջոցների պահանջարկը՝ արտադրանքի ծավալի պահանջվող աճին հասնելու համար: Մինչդեռ, առանձին բաղադրամասերի աճը ոչ միշտ և ոչ բոլոր պայմաններում կարող է բերել արտադրանքի թողարկման աճի տեմպերի արագացմանը:

Այդ կապակցությամբ հավասարակշռման որոշ մեթոդներ պետք է կառուցվեն այնպես, որպեսզի հաշվի առնվի.

- արտադրության կոնկրետ պայմաններում նրա մակարդակի ձևավորման և պլանավորման առանձնահատկությունները,
- հավասարակշռման ազդեցությունն արտադրանքի աճի բարձրացման վրա՝ նկատի ունենալով ապրանքի տեխնիկատնտեսական պարամետրերը և սպառողական հատկությունները,
- տեխնիկայի վերարտադրության հնարավորությունը, որը հանդիսանում է նոր արտադրանքի ստեղծման հիմնական նախադրյալը
- նյութական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, արտադրական միջոցների նոր կառուցվածքի ստեղծումը և դրանց տեխնիկատնտեսական բնութագրերի բարելավումը:

Որպես հիմնական տնտեսական գործընթացների համալիր հասկացություն ԱԿՀ-ի և ԱՇ-ի հավասարակշիռն արտահայտում է ոլորտի կազմակերպատնտեսական և շուկայական զարգացման տարբեր միտումները: Որքանով որ այդ հայեցակարգերը դրսևորվում են տարբեր տեխնիկատնտեսական և շուկայական ցուցանիշներով, որոնք օգտագործվում են ԱԿՀ-ի և ԱՇ-ի հավասարակշռման ու գնահատման համակարգի մեջ, այնքանով էլ նման հավասարակշիռը

որպես համալիր տնտեսական կատեգորիա ենթադրում է հետևյալ գործընթացները՝ բազմաճյուղային արտադրության գործունեության գնահատման, հումքի և նյութերի մշակման ցիկլերի տևողության որոշման, արտադրական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման, արտադրության վերամասնագիտացման, արտադրության տեխնիկատնտեսական ցուցանիշների գնահատման, անհրաժեշտ արտադրական ռեսուրսների ծավալի որոշման, արտադրանքի իրացման և մրցունակության գնահատման: Սա նշանակում է, որ ԱԿՀ-ի և ԱՇ-ի հավասարակշռումը կարելի է դիտարկել որպես այդ գործընթացների ընդհանրացում: Այսպիսով, հիմք ընդունելով վերոնշալները, հարկ ենք համարում նշել, որ ԱԿՀ-ի և ԱՇ-ի հավասարակշռման գնահատման մեթոդական ու մեթոդոլոգիական սկզբունքները հանդիսանում են երկու ելակետային՝ «տեխնիկատնտեսական մակարդակ և արտադրական ապարատի կառուցվածք» և «արտադրության մրցունակություն» հասկացությունների բնորոշման հիմքերը: Առաջին հասկացությունը վերաբերում է ԱԿՀ-ի և ԱՇ-ի հավասարակշռման ավելի լայն իմաստին և տարածվում է արտադրության տեխնիկայի ու տեխնոլոգիայի վրա, իսկ երկրորդն իրենից՝ ներկայացնում է ընդհանրացված հասկացություն և տարածվում է արտադրության կառուցվածքի ու արտադրվող արտադրանքի շուկայական իրացման վրա:

ԱԿՀ-ի և ԱՇ-ի մակարդակի որոշման ժամանակ պետք է ելնել նաև արտադրության կոնկրետ պայմաններից, շուկայի կազմակերպման միջոցներից և տնտեսական ներուժի մրցակցության հնարավորությունից:

Հավասարակշռման գնահատման ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ նաև ելակետային տեղեկատվության տվյալները՝ ոլորտի արտադրական ծրագիրը, հիմնական արտադրատեսակների թողարկման ծավալը, արտադրական ցիկլի տևողությունը և արտադրական հզորությունների օգտագործման աստիճանը, ինչպես նաև արտադրանքի ռեսուրսատարությունը: Ընդ որում, ծավալային ցուցանիշները պետք է որոշվեն ըստ արտադրության կոնկրետ պայմանների և արտադրանքի իրացման ուղղության: Այստեղից պետք է ենթադրել, որ ԱԿՀ-ի և ԱՇ-ի հավասարակշռման բաղադրիչների ու նրանց ներքին կապերի ուսումնասիրման անհրաժեշտություն է առաջանում ըստ որի հնարավորություն է ընձեռվում՝ պարզաբանելու և ճանաչելու այն տեխնիկատնտեսական ու շուկայական հարաբերությունները, որոնք կարևոր են նրանց ձևավորման և հավասարակշռման ժամանակ:

Դրա հետ կապված, բնականաբար, առաջանում են նաև տեսական և գործնական բնույթի հիմնախնդիրներ, որոնք ամբողջությամբ վերաբերում են ԱԿՀ-ի և ԱՇ-ի հավասարակշռման քանակական ու որակական բնութագրերին, դրա առանձին բաղադրիչների միջև փոխադարձ կապերի բնույթի պարզաբանմանը, որը պետք է դիտարկել որպես այդ կատեգորիայի հետազոտման հիմնական խնդիրներից մեկը:

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ ԱԿՀ-ի և ԱՇ-ի միջև հավասարակշռման ձևավորման ճշգրտումը առավելապես անհրաժեշտ է դառնում մրցակցության բարձր մակարդակի պայմաններում և արդյունաբերության կառավարման համալիր մոտեցումների գնահատման դեպքում: ԱԿՀ-ի և ԱՇ-ի հավասարակշռման համակարգում նշված հասկացությունների օգտագործումը հանդիսանում է հավասարակշռման տեսական և գործնական կարևորագույն հիմնախնդիրը: Դա ենթադրում է ոչ թե արդյունաբերության արտադրանքի ծավալի և դրա շուկայական պահանջարկի բացարձակ հավասարեցում, այլ հանրապետության պահանջմունքների, ներմուծման և արտահանման ապահովում[1]: Միաժամանակ վերջնական արդյունքում, հիմնախնդիրների համալիր և ծրագրային լուծումը կնպաստի ինչպես արդյունաբերության կառուցվածքային քաղաքականության իրականացմանը,

[1] Ա.Ե. Զաքարյան, ՀՀ արդյունաբերության կառուցվածքային համակարգի և ազգային շուկայի հավասարակշռման հիմնախնդիրները, Երևան, 1996, էջ 23:

այնպես էլ նրա շուկայական տնտեսության փոխադարձ կապի կայունացմանը, դրանց միջև առաջացած էական անհամամասնությունների վերացմանը: Վերջինս ենթադրում է հավասարակշռման մի մակարդակից մյուսին անցնելու նյութական նախադրյալների ստեղծումը, որը կապված է՝ արդյունաբերության ոլորտային կառուցվածքային փոփոխությունների, նոր ինֆրակառուցվածքի, արտադրանքի անվանացանկի ընտրության, արտադրանքի տեխնիկական մակարդակի և մրցունակության բարձրացման հետ: Այս համատեքստում ազգային շուկայի ձևավորման համար շատ կարևոր է տնտեսական բազմակողմ կապերի ստեղծումը, որը կարող է կրել ռեսուրսային կամ էլ վերջնական օգտագործման արտադրանքի արտահանման և ներմուծման բնույթ: Հետևաբար, կարող ենք ընդգծել, որ ցանկացած երկրի համար ներմուծումն ու արտահանումը, որպես հավասարակշռման պարամետրեր կարող են ազգային շուկայի ձևավորման անհրաժեշտություն առաջացնել:

Տնտեսական կապերի միջոցով շուկայի ձևավորումն ունի որոշակի քանակական և որակական բնութագրիչներ, որոնք միաժամանակ հիմք են հանդիսանում նշված հավասարակշռման նոր մակարդակի ստեղծման համար: Ի դեպ, արտահանման և ներմուծման ծավալների ու կառուցվածքի փոփոխության միջոցով հավասարակշռումը ձևավորվում է ոչ թե որպես անփոփոխ մեծություն, այլ հարաբերական մակարդակ:

Այսպիսի պայմաններում, եթե հավասարակշռման վրա արտահանման ազդեցությունը արտահայտվում է արտադրանքի մրցունակության միջոցով, ապա ներմուծման ազդեցությունը տեղի է ունենում երկու ձևով՝ մի դեպքում ներմուծվում են սպառման առարկաներ, որոնք համալրում են պահանջարկը և ապահովում հավասարակշռման որոշակի մակարդակ, իսկ մյուս դեպքում կարող են ներմուծվել ինվեստիցիաներ, որոնք նպաստում են արդյունաբերության զարգացմանն ու տնտեսական աճին, դրանով իսկ ապահովելով հավասարակշռման բարձր մակարդակ: Ինչպես տեսնում ենք, հավասարակշռման հիմնախնդրի գնահատման ժամանակ միահյուսվում են բազմաթիվ գործընթացներ, որոնք դուրս գալով այս կամ այն ոլորտի շրջանակներից տարածվում են ամբողջ տնտեսության զարգացման վրա: Քննարկված հավասարակշռության ճշգրտությունը պետք է որոշել ելնելով արտադրական հզորությունների օգտագործման աստիճանից, ինչպես նաև ոլորտի միասնական կառուցվածքային և շուկայական քաղաքականության առանձնահատկություններից: Այս մոտեցումների էության զուգակցումը թույլ է տալիս կատարելու հետևյալ եզրահանգումները.

1. Գործնական, որին հնարավոր է ԱԿՀ-ն և ԱՇ-ն հաշվեկշռել, հաշվի առնելով տվյալ արտադրանքի արտադրության, շուկաներում իրացման հնարավորությունները, արտադրության տեխնոլոգիական առանձնահատոկությունները, նոր սարքավորումների և ավտոմատացված հավաքագծերի ներդրման հնարավորությունները:
2. Ոլորտի տեխնիկական անհրաժեշտ մակարդակի մրցակցության ապահովման տնտեսական հնարավորությունները:

Այսպիսով, ընդհանրական առումով նշենք, որ որպես հավասարակշռման չափանիշ նպատակահարմար է ընդունել արտադրանքի արտադրության ծավալը և դրա լրիվ իրացումը: Բացի այդ, կապված ոլորտի արտադրանքի պահանջմունքից և նյութական ռեսուրսների սահմանափակման չափերից, որպես կարևոր չափանիշ կարելի է ընդունել նաև նյութերի ու ապրանքների ներմուծումը: Հետևաբար, ԱԿՀ-ի և ԱՇ-ի հավասարակշռումը հիմնականում կապված է արտադրանքի իրացման ապահովման հետ, իսկ դրա համար անհրաժեշտ է կատարել նաև հավասարակշռման օբյեկտների ընտրություն, կառավարման մեթոդների մշակում և դրանց մակրոմակարդակով կիրառում:

ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՄԱՆ ՀԻՄՆԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՐԱՐԱՏ ԵՂԻՇԵԻ ԶԱՔԱՐՅԱՆ, *տ.գ.դ., պրոֆեսոր*
ՀՊՏՀ մարքեթինգի ամբիոնի վարիչ
ԿԱՐԱՊԵՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՊՏՀ մարքեթինգի ամբիոնի ասիստենտ

Համառոտագիր

Ֆինանսատնտեսական ճգնաժամերի ու տնտեսական համակարգերի փոփոխությունների ընթացքում շատ հաճախ է խոսվում տնտեսական քաղաքականությունների վերանայման մասին, և դա շատ բնական է: Սակայն ցանկացած երկիր պարտավոր է վերանայել իր տնտեսական քաղաքականությունը նաև նման իրավիճակների բացակայության պայմաններում, որպեսզի կարողանա իր արտադրությամբ ու ծառայություններով առավելագույնս բավարարել ազգային շուկայի կարիքները: Դա հնարավոր է միայն արդյունաբերության կառուցվածքային համակարգի և ազգային շուկայի պահանջմունքների հավասարակշռման միջոցով: Ներկայացված հոդվածում այս խնդիրները քննարկվել են ռեսուրսների ռացիոնալ օգտագործման տեսանկյունից և ներկայացվել են դրան ուղղված միջոցառումները:

Բանալի բառեր. *արդյունաբերության կառուցվածքային համակարգ, ազգային շուկա, շուկայի հավասարակշռություն, ռեսուրսների օգտագործում, մրցունակություն, մրցակցություն, համալիր կառավարում:*

ПРОБЛЕМЫ РАВНОВЕСИЯ СТРУКТУРЫ ПРОМЫШЛЕННОЙ СИСТЕМЫ И НАЦИОНАЛЬНОГО РЫНКА РА

АРАРАТ ЕГИШЕВИЧ ЗАКАРЯН, *д.э.н., профессор*
заведующий кафедрой маркетинга Армянского государственного экономического университета
КАРАПЕТ ОГАНЕСОВИЧ АРАКЕЛЯН, *к.э.н.,*
ассистент кафедры маркетинга Армянского государственного экономического университета

Аннотация

Во время экономических кризисов и изменений экономических систем часто упоминается о пересмотре экономической политики, что естественно. Но каждая страна обязана пересматривать свою экономическую политику и в отсутствии таких ситуаций, чтобы быть в состоянии максимально удовлетворить нужды национального рынка в процессе собственного производства и оказания услуг. Это возможно только с помощью установления равновесия между структурой промышленной системы и потребностями национального рынка. В представленной статье данные проблемы обсуждаются с точки зрения рационального использования ресурсов и представлены мероприятия в этом направлении.

Ключевые слова: *структура промышленной системы, национальный рынок, равновесие рынка, использование ресурсов, конкурентоспособность, конкуренция, комплексное управление.*

ISSUES ON THE INDUSTRIAL STRUCTURAL SYSTEM TO MEET THE NEEDS OF THE DOMESTIC MARKET IN THE REPUBLIC OF ARMENIA

ARARAT YEGHISHE ZAKARYAN, *Doctor of Sciences (Economics), Professor*
Head of Chair of Marketing, Armenian State University of Economics
KARAPET HOVHANNES ARAKELYAN, *Candidate of Sciences (Economics)*
Assistant Professor, Chair of Marketing, Armenian State University of Economics

Abstract

During financial and economic crises and shifts in economic systems, the need for revising the economic policy is often spoken about, and it is quite natural. However, any nation has to revise its economic policy, even when the economy is not reporting such developments in order to meet the needs of the domestic market the most, by providing domestically produced goods and rendering services. It could be possible only when theindustrial structural system meets the needs of the domestic market. The article discusses the stated issues from the aspect of rational utilization of resources and proposes measures to address these issues.

Keywords: *Industrial structural system, domestic market, market equilibrium, use of resources, competitiveness, competition, complex management.*